ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 մարտի 2016 թվականի թիվ 36 - Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի ԹԻՎ 144-Ն ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻՆ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻՑ ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԵՎ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության սահմանամերձ համայնքներին տրվող սոցիալական աջակցության փոխհատուցման ենթակա ծավալների, փոխհատուցման կարգի և փոխհատուցում ստացող սահմանամերձ համայնքների ցանկը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի մարտի 21-ի թիվ 271-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» թիվ 1444-Ն, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի փետրվարի 18-ի «Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 1555-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ 144-Ն որոշումները և ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետի զեկուցագիրը՝

ո ր ո շ ու մ ե մ

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի փետրվարի 18-ի «Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 1555-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ 144-Ն որոշմամբ Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանին բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով հատկացված 708250,0 հազար դրամից 58312.1 հազար դրամը փոխանցել համայնքների հողի հարկի և գույքահարկի գանձապետական հաշվեհամարին՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար, գլխավոր ֆինանսիստ Ս. Դավթյանին՝ ապահովել որոշման կատարումը:

3. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի տեղակալ Կ. Ադամյանի վրա:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հ. ԱԲՈՎՅԱՆ

2016 թ. մարտի 16
ք. Իջևան

հավելված
ՀՀ Տավուշի մարզպետի 2016 թվականի
մարտի 16-ի թիվ 36 - Ա որոշման

ՀՀ Տավուշի մարզի սահմանամերձ համայնքներին ցուցաբերվող պետական աջակցության գումարների բաշխման վերաբերյալ
ըստ եռամսյակային համամասնությունների

հազար դրամ

| Հ/Հ | Համայնքի անվանումները | 2016թ. հողի հարկ | 2016թ. գույքահարկ | Ընդամենը աջակցության գումար | այդ թվում ըստ եռամսյակների | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | 1-ին եռամսյակ | | | 3-րդ եռամսյակ | | |
| | | | | | հողի հարկ | գույքահարկ | Ընդամենը | հողի հարկ | գույքահարկ | Ընդամենը |
| 1 | Այգեհովիտ | 4340.5 | 0.0 | 4340.5 | 2170.2 | 0.0 | 2170.2 | 2170.3 | 0 | 2170.3 |
| 2 | Բերքաբեր | 480.1 | 0.0 | 480.1 | 240.0 | 0.0 | 240.0 | 240.1 | 0 | 240.1 |
| 3 | Ն. Ծաղկավան | 1569.6 | 0.0 | 1569.6 | 784.8 | 0.0 | 784.8 | 784.8 | 0.0 | 784.8 |
| 4 | Կիրանց | 316.6 | 0.0 | 316.6 | 158.3 | 0.0 | 158.3 | 158.3 | 0.0 | 158.3 |
| 5 | Սարիգյուղ | 2224.4 | 0.0 | 2224.4 | 1112.2 | 0.0 | 1112.2 | 1112.2 | 0.0 | 1112.2 |
| 6 | Սևքար | 5007.8 | 0.0 | 5007.8 | 2503.9 | 0.0 | 2503.9 | 2503.9 | 0.0 | 2503.9 |
| 7 | Վազաշեն | 1032.0 | 0.0 | 1032.0 | 516.0 | 0.0 | 516.0 | 516.0 | 0.0 | 516.0 |
| 8 | Բերդավան | 5506.1 | 0.0 | 5506.1 | 2753.0 | 0.0 | 2753.0 | 2753.1 | 0.0 | 2753.1 |
| 9 | Բարեկամավան | 297.4 | 0.0 | 297.4 | 148.7 | 0.0 | 148.7 | 148.7 | 0.0 | 148.7 |
| 10 | Բաղանիս | 793.6 | 0.0 | 793.6 | 396.8 | 0.0 | 396.8 | 396.8 | 0.0 | 396.8 |
| 11 | Դովեղ | 1081.0 | 0.0 | 1081.0 | 540.5 | 0.0 | 540.5 | 540.5 | 0.0 | 540.5 |
| 12 | Կոթի | 3078.7 | 0.0 | 3078.7 | 1539.4 | 0.0 | 1539.4 | 1539.3 | 0.0 | 1539.3 |
| 13 | Կողբ | 4122.0 | 457.5 | 4579.5 | 2061.0 | 228.7 | 2289.7 | 2061.0 | 228.8 | 2289.8 |
| 14 | Ոսկեվան | 1390.9 | 0.0 | 1390.9 | 695.5 | 0.0 | 695.5 | 695.4 | 0.0 | 695.4 |
| 15 | Այգեձոր | 3896.6 | 0.0 | 3896.6 | 1948.3 | 0.0 | 1948.3 | 1948.3 | 0.0 | 1948.3 |
| 16 | Այգեպար | 40.8 | 0.0 | 40.8 | 20.4 | 0.0 | 20.4 | 20.4 | 0.0 | 20.4 |
| 17 | Արծվաբերդ | 5893.2 | 52.2 | 5945.4 | 2946.6 | 26.1 | 2972.7 | 2946.6 | 26.1 | 2972.7 |
| 18 | Մոսեսգեղ | 3027.0 | 0.0 | 3027.0 | 1513.5 | 0.0 | 1513.5 | 1513.5 | 0.0 | 1513.5 |
| 19 | Ն. Կ. Աղբյուր | 1272.0 | 8.5 | 1280.5 | 636.0 | 4.3 | 640.3 | 636.0 | 4.2 | 640.2 |
| 20 | Չինարի | 1844.8 | 0.0 | 1844.8 | 922.4 | 0.0 | 922.4 | 922.4 | 0.0 | 922.4 |
| 21 | Չորաթան | 1948.6 | 0.0 | 1948.6 | 974.3 | 0.0 | 974.3 | 974.3 | 0.0 | 974.3 |
| 22 | Պառավաքար | 4100.0 | 0.0 | 4100.0 | 2050.0 | 0.0 | 2050.0 | 2050.0 | 0.0 | 2050.0 |
| 23 | Վ. Կ. Աղբյուր | 4530.2 | 0.0 | 4530.2 | 2265.1 | 0.0 | 2265.1 | 2265.1 | 0.0 | 2265.1 |
| | **Ընդամենը մարզում** | **57,793.9** | **518.2** | **58,312.1** | **28,896.9** | **259.1** | **29,156.0** | **28,897.0** | **259.1** | **29,156.1** |

ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Ս. Դավթյան